յաղթանակներ և կը ջանայ Հայաստանի ներկայ սահմանների մէջ առնել նաև Տաճկահայաստանի այն մասերը, որոնք հանդիսանում են հայ աշխատաւորութեան հայրենիքը»։

Քիչ յետոյ ստացուեց և զօրավար Դենիկինի ճանաչումը։ Հարաւային Ռուսաստանի Զինուած Ուժերի Գլխաւոր Հրամանատարի զինուորական ներկայացուցիչը Հայաստանում՝ գնդապետ Զենկևիչը գրում էր փետր. 10-ին. «Պատիւ ունեմ տեղեկացնելու Հայաստանի կառավարութեան Մեծ Բրիտանիայի անդրկովկասեան կոմիսարի և Թիֆլիսի մեր ներկայացուցչի միջոցով հին տոմարով յուն. 21-ին (նոր տոմ. 3 փետր.) ինձ ուղարկուած մի հեռագրական հաղորդագրութիւնը, որով յայտնում է, թէ Հարաւ Ռուսաստանի զինուորական ուժերի գլխաւոր հրամանատարը ճանաչում է փաստօրէն գոյութիւն ունեցող Հայաստանի, Ադրբէջանի և Վրաստանի կառավարութիւնները։ Ուրախ եմ առիթից օգտուելով յիշեցնելու, որ Փարիզում դաշնակիցների կողմից ընդունուած կատարելապէս միևնոյն ակտը Հայաստանի վերաբերմամբ զօր. Դենիկինի կողմից իրականացուած էր դեռ 1919թ. օգոստ. 20-ին (հին տոմ.), երբ Հայաստանի կառավարութեան մօտ նշանակում էր իր զինուորական ներկայացուցչին»։

Պէտք է ասել, որ հայերի մէջ անխախտ համոզում էր տիրում, որ Կամաւոր. Բանակը Հայաստանի նկատմամբ ունի առանձին վերաբերում։ Այդ համոզումը ամրանում էր և զօր. Դենիկինի մի շարք համակրական արտայայտութիւններով ու կարգադրութիւններով։ Այսպէս, 1919թ. նոյ. 9-ին նա հրատարակել էր իր ծանօթ հրամանը, որի մէջ ասում էր, թէ՝ «Ի նկատի ունենալով ադրբէջանեան իշխանութիւնների թշնամական վերաբերումը դէպի ռուս բանակը և ի նկատի ունենալով ադրբէջանեան զօրքերի դաւադիր յարձակումը Հայաստանի հողերի վրա՝ հրամայում եմ ադրբէջանեան զօրքերի մէջ գտնուող ռուսական ծառայութեան բոլոր սպաներին հեռանալ նրանց շարքերից»։

Քաղաքական տեսակէտից, սակայն, զօր. Դենիկինը դէպի Հայաստանը ունէր նոյն վերաբերումը, ինչ որ և դէպի Ադրբէջանն ու Վրաստանը։ 1919 թւի յուլ. 2-ին նա այսպիսի հրահանգ էր տալիս զօր. Բարատովին, որը գնում էր Թիֆլիս՝ բանակցելու համար անդրկովկասեան հանրապետութիւնների հետ.

«Կատարելապէս համակրելով հայ ժողովրդի ձգտումներին՝ միանալու ազգային սահմանների մէջ և համարելով, որ հայերը իրենց պատմական ու տնտեսական շահերով սերտ կերպով կապուած են Մէկ, Անբաժան Ռուսաստանի հետ, որի սահմանների մէջ է մտնում Հայաստանի ամենից աւելի ծաղկած մասը, Հարաւ. Ռուս Զին. Ուժերի Գլխ. Հրամանատարութիւնը նոյն ձևով, ինչպէս և Վրաստանի ու Ադրբէջանի վերաբերմամբ, ընդունում է հայկական շրջանների անջատ ինքնուրոյն կառավարութիւնը, մինչև համառուսական իշխանութեան վերջնական հաստատումը, առանց ունենալու որև է յարձակողական դիտաւորութիւն Հայաստանի վերաբերմամբ, բայց միշտ մնալով կանգնած ռուս պետականութեան միութեան տեսակէտի վրա»։

Նոյն միտքը մենք տեսնում ենք արտայայտուած և հրապարակօրէն։ 1920թ. յուն. 16-ին, Գերագոյն Կրուգում արտասանած ճառում զօրավար Դենիկինը, հետևեալ ձևով էր բնորոշում իր վերաբերումը դէպի Ռուսաստանից անջատուած հողամասերը.